ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N

ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Գյումրի « 26 » 01 2022 թ.

ՀՀ Շիրակի մարզպետարանը, ի դեմս մարզպետարանի գլխավոր քարտուղար Ա.Աբրահամյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Սպառող), մի կողմից, և <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ <<Շիրակի ԳԳՄ >>, որը գործում է համաձայն իրեն տրամադրած գործունեության թիվ 01-33/584 լիցենզիայի այսուհետ՝ <<Մատակարար>>, ի դեմս տնօրենի ժ/պ Ա.Գալստյանի մյուս կողմից, հիմք ընդունելով 2021 թվականի հոկտեմբերի 5-ին կնքված N: 02108133943 գազի մատակարարման պայմանագրի այսուհետ՝ պայմանագիր <<Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման>> թիվ ՀՀ ՇՄ ՀՄԱ-ԱՊՁԲ-18/1 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 42-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Մատակարարը պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Սպառողին մատակարարել սույն Համաձայնագրի հավելվածով սահմանված գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Սպառողը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Սույն համաձայնագիրը գործում է 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Ծառայության մատուցման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետարան	<<ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ>> ՓԲԸ
ք. Գյումրի Գ. Նժդեհի 16	<<ՇԻՐԱԿԻ ԳԳՄ>>
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	Ք. Գյումրի, ՉԱՅԿՈՎՍԿԻ 2
ՀՀ 900211205027	<<Արդշինբանկ>>ՓԲԸ
ՀՎՀՀ 05507437	ՀՀ 2472600239700010
	ՀՎՀՀ 00046317
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ